ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/02 ծածկագրով բաց մրցույթի գնման ընթացակարգի հայտերի գնահատման հանձնաժողովի նիստի

Գավառ, Կենտրոնական հրապարակ 7 **«26» «07» 2018թ.**
ժ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Արմեն Զոհրաբյան /ԳԱՊ/,
Հանձնաժողովի անդամներ Յուրա Մուշեղյան /ԲԱ/, Գևորգ Խաչատրյան/ԳԱ/,
Վալեր Հոդաբաշլան/ԲԱ/,Գուրգեն Մելքոնյան/ԳԱ/
Հանձնաժողովի քարտուղար՝ Արթուր Բաղեյան/ՄՀՄ/

ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/02 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգ
Արմեն Զոհրաբյան

1. 20.06.2018թ.-ին կասեցված ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/02 ծածկագրով բաց մրցույթի գնման ընթացակարգի նիստի վերսկսման մասին որոշման ընդունում:

2. Հիմք ընդունելով գնումների բողոքարկման խորհրդի ԳԲԽ-ԷՍ-2018/82 բողոքի որոշումը՝ դադարեցնել 15.06.2018թ.-ին ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/02 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից <<Եվրոպա>> ՍՊԸ-ի ներկայացրած հայտը հրավերի պահանջներին համապատասխան ճանաչելու մասին որոշման ընդունումը:

3. Հիմք ընդունելով գնումների բողոքարկման խորհրդի ԳԲԽ-ԷՍ-2018/82 բողոքի որոշումը՝ դադարեցնել 15.06.2018թ.-ին ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/02 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի որոշումը՝ <<Եվրոպա>> ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ:

4. Հիմք ընդունելով գնումների բողոքարկման խորհրդի 23.07.2018թ.ԳԲԽ-ԷՍ-2018/82 բողոքի որոշումը՝ մերժել <<Եվրոպա>> ՍՊԸ-ի ներկայացրած հայտը:

5. Հիմք ընդունելով գնումների բողոքարկման խորհրդի 23.07.2018թ. ԳԲԽ-ԷՍ-2018/82 բողոքի որոշումը՝ <<ԱՐՍԵՎ>> ՍՊԸ-ի ներկայացրած հայտը հրավերի պահանջներին համապատասխան ճանաչելու մասին որոշման ընդունում:

6. Բավարար գնահատված հայտերի գնային առաջարկների հիման վրա մասնակիցների հայտերի վերագնահատման որոշման ընդունում:

7. ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/02 ծածկագրով բաց մրցույթի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկի հիման վրա 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել որոշման ընդունում:

8. Հարցում ներկայացնել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

9. Ծանուցում 1-ին տեղն զբաղեցրած մասնակցին՝ որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

10. Գնահատող հանձնաժողովի փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստ հրավիրել մասին որոշման ընդունում:

Գնահատող հանձնաժողովի որոշեց՝

1. Ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին ենթակետի պահանջներով՝ վերսկսել 20.06.2018թ.-ին <<ԱՐՍԵՎ>> ՍՊԸ-ի՝ գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացրած բողոքի հիման վրա կասեցված ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/02 ծածկագրով գնման ընթացակարգը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. Հիմք ընդունելով գնումների բողոքարկման խորհրդի 23.07.2018թ.ԳԲԽ-ԷՍ-2018/82 բողոքի որոշումը և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթները մերժել <<Եվրոպա>> ՍՊԸ-ի ներկայացրած հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. Հիմք ընդունելով գնումների բողոքարկման խորհրդի 23.07.2018թ.ԳԲԽ-ԷՍ-2018/82 բողոքի որոշումը՝ դադարեցնել <<Եվրոպա>> ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ 15.06.2018թ.-ին ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/02 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի որոշումը:

4. Հիմք ընդունելով գնումների բողոքարկման խորհրդի 23.07.2018թ. ԳԲԽ-ԷՍ-2018/82 բողոքի որոշումը և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթները՝

- մերժել <<Եվրոպա>> ՍՊԸ-ի, <<Բիդեք>> ՍՊԸ-ի և <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ-ի ներկայացրած հայտերը հետևյալ հիմնավորմամբ՝

- <<Եվրոպա>> ՍՊԸ-ի, <<Բիդեք>> ՍՊԸ-ի և <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովվման՝ բանկային երաշխիքի մեջ որպես բենեֆիցիար նշված է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, բայց քանի որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցի հիմնանորոգման աշխատանքներ կատարման համար որպես պատվիրատու հանդես է գալիս ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը, ուստի որպես պարտատեր (բենեֆիցիար) պետք է նշվեր ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5. Հիմք ընդունելով գնումների բողոքարկման խորհրդի 23.07.2018թ.ԳԲԽ-ԷՍ-2018/82 բողոքի որոշումը և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթները՝ <<ԱՐՍԵՎ>> ՍՊԸ-ի և <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ-ի ներկայացրած հայտերը ճանաչել հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6. Բավարար գնահատված մասնակցների հայտերի գնային առաջարկները հետևյալն է.

h/h	Մասնակցի անվանումը	Աշխատանքի նախահաշվային գինը	Առաջարկված գինը՝ առանց ԱԱՀ	Առաջարկված գնի՝ ԱԱՀ	Առաջարկված գինը՝ ԱԱՀ-ով
1	<<ԱՐՍԵՎ>> ՍՊԸ	712933310	430000000	86000000	516000000
2	<<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ		483475000	96695000	580170000

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/02 ծածկագրով բաց մրցույթի բավարար գնահատված հայտի և նվազագույն գնային առաջարկի հիման վրա 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<ԱՐՍԵՎ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

8. Համաձայն ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 43-րդ կետի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

9. Համաձայն ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 43-րդ կետի 4-րդ մասի՝ <<ԱՐՍԵՎ>> ՍՊԸ-ին առաջարկելով՝ ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

10. Գնահատող հանձնաժողովը որոշեց փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստ հրավիրել է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը՝ Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, Մարզպետարանի վարչական շենք, N 212 աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նախագահ՝ _____ Ա. Զոհրաբյան

Անդամներ՝ _____ Յու. Մուշեղյան

_____ Գ. Խաչատրյան

_____ Վ. Հոդաբաշյան

_____ Գ. Մելքոնյան

Քարտուղար՝ _____ Ա.Բաղեյան